ՈՒԺի մեջ է 2026թ. ապրիլի 17-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

10 ապրիլի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1] Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-00:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-21:30):
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:

- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

9. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում: Բանկը կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք, այդ թվում՝ Բանկի կողմից տարանցիկ դասակարգված գործարքներ:

10. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

11. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ	
1. ՀՀ պետական պարտատոմսերի դեպո հաշիվների բացում և սպասարկում	
1.1. արժեթղթերի հաշիվների (դեպո) բացում և փակում	անվճար
1.2. դեպո հաշիվների սպասարկում (պահառության վճար)	անվճար
1.3. դեպո հանձնարարականի կատարում	անվճար
1.4. դեպո հաշիվներից քաղվածքների և այլ տեղեկանքների տրամադրում	անվճար
2 . Միջազգային արժեթղթերի հաշիվների բացում և սպասարկում	
2.1. արժեթղթերի հաշիվների (դեպո) բացում և փակում	անվճար
2.2. արժեթղթերի հաշիվների սպասարկում (պահառության վճար)	անվճար
2.3. Միջազգային արժեթղթերի միջպահառուական փոխանցում	0.2 % ոչ պակաս 30 000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր թողարկման համար)
2.4. Արժեթղթերի փոխանցում/ստացում (բանկի հետ կնքված բրոքերային գործարքի արդյունքում)	անվճար
2.5. Քաղվածքների և տեղեկանքների տրամադրում	ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով արտահանվող տեղեկանքներ և քաղվածքներ՝ անվճար ծրագրային համակարգից ինքնաշխատ կերպով չարտահանվող տեղեկանքներ և քաղվածքներ՝ 2 000 ՀՀ դրամ
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
3. Տեղական արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում[2]	
3.1. ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկա՝	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.05%, նվազագույնը 10 000 ՀՀ դրամ+ բորսայի միջնորդավճար

[2] Արտարժույթով արտահայտված արժեթղթերով գործարքների դեպքում դրամային համարժեքը հաշվարկվում է գործարքին նախորդող օրվա ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող միջին փոխարժեքով: Համաձայն 09.10.2024թ. գրանցված Հայաստանի Ֆոնդային բորսա ԲԲԸ սակագների մասին կանոնների Գլուխ 15-ի 67 կետի՝ հաշվարկված միջնորդավճարները կլորացվում են ՀՀ 1 դրամի ճշտությամբ: Հայաստանի Ֆոնդային բորսա ԲԲԸ սակագների մասին տեղեկատվությանը ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://amx.am/am/pages/trading-fee:

- 100 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.03%+ բորսայի միջնորդավճար
3.2. ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկա՝	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով և թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում գործարքի գումարի 0.05%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ+ բորսայի միջնորդավճար
- 100 մլն ՀՀ դրամից ավելի	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով և թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում գործարքի գումարի 0.03% + բորսայի միջնորդավճար
3.3. Կորպորատիվ արժեթղթերի շուկա՝ (բացառությամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի)	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարակաների դեպքում՝ գործարքի գումարի 0.20% . նվազագույնը 2 000 ՀՀ դրամ+բորսայի միջնորդավճար Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում՝ գործարքի գումարի 0.20%, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ + բորսայի միջնորդավճար
- 100 մլն ՀՀ դրամից ավելի	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարակաների դեպքում՝ գործարքի գումարի 0.15%+բորսայի միջնորդավճար Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում՝ գործարքի գումարի 0.15%, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ + բորսայի միջնորդավճար
3.4. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերով գործառնություններ	
- մինչև 20 մլն ՀՀ դրամ	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարակաների դեպքում՝ գործարքի գումարի 0.10%,նվազագույնը 1 000 ՀՀ դրամ+բորսայի միջնորդավճար Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում՝ գործարքի գումարի 0.10% , նվազագույնը 3 000 ՀՀ դրամ + բորսայի միջնորդավճար

- 20 մլն ՀՀ դրամից ավելի	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարակաների դեպքում՝ գործարքի գումարի 0.05%, +բորսայի միջնորդավճար Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում՝ գործարքի գումարի 0.05% + բորսայի միջնորդավճար
3.5. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված բաժնետոմսերով գործառնություններ	acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացված հանձնարարակաների դեպքում՝ գործարքի գումարի 0.05%, նվազագույնը 500 ՀՀ դրամ+ բորսայի միջնորդավճար, Թղթային եղանակով ներկայացված հանձնարարականների դեպքում՝ գործարքի գումարի 0.05%, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ + բորսայի միջնորդավճար
4 . Միջազգային արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում	
4.1. Բաժնետոմսեր և բորսաներում վաճառվող ֆոնդի փայեր (ETF)	
4.1.1. Հյուսիսային Ամերիկա՝	
- ԱՄՆ	0.01 USD, յուրաքանչյուր արժեթղթի համար, նվազագույնը՝ 4 USD
- Կանադա	0.02 CAD, յուրաքանչյուր արժեթղթի համար, նվազագույնը՝ 4 CAD
4.1.2. Եվրոպա՝	
- Ավստրիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Էստոնիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Լատվիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Լիտվա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Բելգիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Դանիա	0.1 %, նվազագույնը՝ 30 DKK
- Չեխիայի Հանրապետություն	0.3 %, նվազագույնը՝ 140 CZK
- Ֆրանսիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Գերմանիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Հունգարիա	0.1 %, նվազագույնը՝ 1300 HUF
- Իտալիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Նիդերլանդներ	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Նորվեգիա	0.1 %, նվազագույնը՝ 50 NOK
- Լեհաստան	0.1 %, նվազագույնը՝ 17 PLN
- Պորտուգալիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Ռումինիա	0.6 %, նվազագույնը՝ 25 RON
- Սլովենիա	0.7 %, նվազագույնը՝ 6 EUR
- Իսպանիա	0.1 %, նվազագույնը՝ 4 EUR
- Շվեդիա	0.1 %, նվազագույնը՝ 40 SEK
- Շվեյցարիա	0.1 %, նվազագույնը՝ 30 CHF
- Մեծ Բրիտանիա	0.1 %, նվազագույնը՝ 5 GBP
4.1.3. Ասիա	
- Ավստրալիա	0.15 %, նվազագույնը՝ 10 AUD

- Հոնգկոնգ	0.1 %, նվազագույնը՝ 40 HKD
- Ճապոնիա	0.1 %, նվազագույնը՝ 560 JPY
- Սինգապուր	0.2 %, նվազագույնը՝ 7 SGD
- Իսրայել	0.1 %, նվազագույնը՝ 15 ILS
- Սաուդիան Արաբիա	0.1 % նվազագույնը՝ 20 SAR
- Միացյալ Արաբական Էմիրություններ	0.1 %, նվազագույնը՝ 20 AED
4.2. Պարտատոմսեր	
4.2.1. Հյուսիսային Ամերիկա	
- ԱՄՆ կորպորատիվ պարտատոմսեր	0.15 %, նվազագույնը՝ 25 USD
- ԱՄՆ պետական պարտատոմսեր	0.003 %, նվազագույնը՝ 25 USD
- Կանադա	0.15 %, նվազագույնը՝ 30 CAD
4.2.2. Եվրոպա	
- Euronext	0.15 %, նվազագույնը՝ 20 EUR
- SIX	0.15 %, նվազագույնը՝ 30 CHF
- OTC	0.15 %, նվազագույնը՝ 20 EUR
4.2.3. Ասիա	
- Ավստրալիա	0.15 %, նվազագույնը՝ 30 AUD
- Հոնգկոնգ	0.15 %, նվազագույնը՝ 195 HKD
5. Բրոքերային հաշվի բացում	անվճար
6. Միջոցների մուտքագրում/ելքագրում[3]	անվճար
7. Բաժանորդագրություն բորսաների տվյալներին ժամանակի իրական ռեժիմում	պայմանագրային
8. Անգործության վճար[4]	1 USD ամսական

[3] Հաշվին միջոցների մուտքագրում/ելքագրումը կարող է կատարվել մինչև հաջորդ աշխատանքային օրը:

[4] Այն հաշիվներից, որոնցում մեկ ամսվա ընթացքում գործարքներ չեն իրականացվել և որոնց զուտ լիկվիդային արժեքը (Net Liquidation Value) կազմում է 1000 ԱՄՆ դոլարից պակաս, գանձվում է 1 ԱՄՆ դոլար անգործության վճար: